ՄԱՐԴ ՉԵՍ, ՄԱՐԴ ՉԵՍ ԴԱՌՆԱ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Շատ հնըմ, դեռ Նիկոլից էլ աղաք, դեղացի մարթի մինը մի տղա յա ունենըմ։ Էս տղեն թոգից փախածի մինն ա ըլըմ ոչ ըշխատըմ ա, ոչ էլ տանը մի օքուտ ա տալի։ Մի խոսքով, սալախանի մինը։ Հերն ա խրատըմ, բան չի դուս գալի։ Ըռավոդվանից, լիսը բաց ըլելու հետ, մինչի ըրիգու հնգորտանց հետ հաղ ա անըմ։
Դրա հըմար էլ հերը տղին ասըմ ա.— Մարթ չես, մարթ չես դառնա։
Էս խոսքը ամեն հետ տղի ըրեսին շըպպացընըմ ա։ Դե ինքը ըշխատող մարդ, սիրտը դիմանըմ չի, մտածըմ ա, որ ըսօր իրա ձեռ ու ոտը սաղ ա, հա՛մ իրան ա պահըմ, հա՛մ էլ կնգանն ու տղին, էքուց-էլոր, որ ձեռ ու ոտից ընգնի, իրանց հալը ո՞նց կըլի։
Մի օր էլ, եփ հերը տղի գլխին ամեն հետվա խրատն ա կարդալիս ըլըմ, տղին ասըմ ա. «Մարթ չես, մարթ չես դառնա», էս բեդովլաթը թողըմ ա տունն ու գլուխն առնըմ, կորչըմ ա։
Տանիցը հեռանալուն եդը, էս տղեն սալախանի պես դես ա ման գալի, դեն ա ման գալի, վերչը մի առուտուրականի ա ռաստ գալի։ Դրա կշտին ծառայության ա մտնըմ ու, արի ու տես, բախ-տը բանըմ ա։ Ինքն էլ բոյով-բուսաթով, սիրուն տղա յա ըլըմ, առուտուրականին դիր ա գալի ու մի էրկու տարուց եդը դառնըմ ա հարուստ առուտուրական։ Ըստի են ասել. «Բախտը խելքի աղաքն ա ընգնըմ»։
Թե ոնց ա պատահըմ, էս տղեն առուտուրի վախտը մի իշխանի ա ռաստ գալի։ Իշխանը մտածըմ ա, որ «Էսա ոտս գերեզմանըմն ա, աղջիկս էլ հասած աղջիկ ա, սա էլ սիրուն, բոյով-բուսաթով, ղոչաղ տղա յա, փեսա կանեմ, ինձանից եդը օջախս կծխացնի»։
Թհենց էլ անըմ ա։ Քոռին էլ ինչ ա պետք, էրկու աչքի լիս։
Մի սիրուն օր էլ տղեն իշխանի ախչկանը ուզըմ ա։ Աչքդ բարին տենա, ինչ նա տենըմ ա։ Զուր տեղը չեն ասել. «Գիժը գնաց հըրսանիք, ասավ՝ ըստի լավ ա, քանց մեր տանը»։
Իշխանի փեսա յա դառնըմ ու իրա հմար քեփ ա քաշըմ։
Մի քանի տարուց եդը իշխանը մեռնըմ ա, տղեն նստըմ ա իշխան ու ամբողջ հարստութինին տեր դառնըմ։
Օրերից մի օր էլ էս մեր իշխանը հորն ու մորը միտն ա գձըմ։ Իրա ծառաներից մնին ղրգըմ ա նրանց եդնա, թե.— Իշխանը հրամայել ա, որ իրա կուշտը գնաք։
Տղի ծնողնին արդեն պռաված են ըլըմ, ոտից ձեռից ընգած։ Ջանները դող ա ընգնըմ, հենց որ հրամանը լսըմ են։
Մտածըմ են, թե, ախպեր, էս ի՞նչ բան ա, որ իշխանն իրանց կանչըմ ա, մնին մի գեշ բան չեն արել, մնի հավին քար չեն գձել, մնին վարդով չոռ չեն ասել։
Է, ինչ տեն իմանալ, որ իրանց բեդովլաթը իշխան ա դառել, նա յա կանչըմ։ Ահ ու դողով ճամփա են ընգնըմ։ Գնըմ են հասնըմ իշխանի պալատը։
Ծառաներից մինը նրանց տանըմ ա դուզ իշխանի կուշտը։ Էդ պառավնին գլուխ են տալի իշխանին ու ճամփա պահըմ, թե նա ինչ ա հրամայելու, մի կոնից վախըմ են, մի կոնից էլ պել կտրըմ, պալատի ոսկին ու էրծաթը հենց որ տենըմ են։
Մին էլ իշխանը հարցնըմ ա.— Բիձա՛, ինձ ճնանչըմ ե՞ս։
Հերը պատասխանըմ ա.— Չէ, պարոն իշխան ջան, անըմդ լսել ի, համա քեզ տեհել չի։
Դե խեղճը ոնց տեր ճնանչի, պռավել էր ու չալկով էր ման գալի, աչքերը պոշացել ին, կնիկն էլ՝ իրա օրին։
— Ա հեր, քու տղեն եմ, բա ասում իր՝ մարթ չես, մարթ չես դառնա՛։

Տղի էս խոսքերի վրա մոր ուշքը գնըմ ա, դե ինչքան չլի, մոր սիրտ ա, կարոտիցը դիմանըմ չի։
Հերը հանգիստ պատասխանըմ ա.— Հլեդ ասըմ եմ, որ մարդ չես, մարդ չես դառնա։
Տղեն ձեռաց վրա յա բերըմ.— Ա՛, հեր, իշխան եմ, մենձ հարըստութինի տեր եմ դառել, կնիկս էլ իշխանական տոհմից ա։
Հերը դրան պատասխանըմ ա.— Տղա ջան, իշխան ես, համա մարդ չես։
Տղեն զըրմացած հարցնըմ ա, թե.— Ընչի՞։
Հերը քո գիդեցածի պես դրան մի լավ նալըմ ա։
— Այ որդի՛, բա որ մարդ ըլեիր,— ասըմ ա հերը,— էս պառավ հալով ծնողներիդ ոտով հասցնիլ չիր ըստի, այլ ինքդ կգեիր, մի հատ էլ կառեթ կբերեիր, մեզ կնստացնեիր, ու առոք-փառոք կբերեիր հարսիս ու թոռներիս կուշտը, կարքին ղոնախլըղ կանեիր, ես էլ կտենայի, որ մարդ ես դառել, մորդ հետ կուրխանեի։ Չէ՛, բալա ջան, մարդ չես, մարդ չես դառնա։
Ասըմ ա ու պառավի հետ դուս գալի պալատից։ Խեղճերը լաց ըլելով գնըմ են իրանց արևի ձենն ածեն, բեդովլաթ տղի լեզուն էլ պապանձվըմ ա, թե հորն ու մորը տուն կանչի։
Աստված չանի, որ ձեզ էլ սհենց զավակ պատահի, ամեն բանի վերջը մարդկութինն ա։